



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 29 Յուլիսը Վարդավառի յաջորդող երրորդ Կիրակին Է. այս առիթով Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

### **PRELATE TO PRESIDE OVER MASS AT HOLY MARTYRS CHURCH**

Sunday, July 29, is the third Sunday of the Feast of the Transfiguration of our Lord, Jesus Christ. On this day, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Holy Mass at Holy Martyrs Church in Encino, and deliver the sermon.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ՝ ԲԱՐԵՐԱՐ ՉԱՐԼՁ ԹԵՅԵԱՆԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐՈՒՆ**

Ազգային Առաջնորդարանս ցաւով իմացաւ ազգային բարերար Չարլզ Թէյեանի մահուան գոյժը:

Չարլզ Թէյեան բարեսիրտ ու ազնիւ հայորդի մըն էր, որ բարերարութիւններ կատարած է առանց մեծ յայտարարութիւններու: Անոր բարերարութիւնները բաշխուած են Ազգային Մտերոպեան Երկրդ. Վարժարանին, Ֆրեզնոյի Հայկական համագաղութային վարժարանին ու USC համալսարանի Հայկական Հետազօտութեանց կեդրոնին վրայ:

Այս տխուր առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը ցաւակցական գիր յղեց հանգուցեալի քրոջ՝ Ազգ. Առաջնորդարանիս բարերարներէն Տիկին Ռոզ Զասիմեանի:

## **PRELATE EXPRESSES CONDOLENCES TO THE FAMILY OF BENEFACTOR CHARLES KEYAN**

In the past week the Armenian Community suffered the loss of benefactor Mr. Charles Keyan. Mr. Keyan was a philanthropist whose charitable work includes donations to Mesrobian Armenian School, the Armenian Community School in Fresno, and the USC Armenian Studies and Research Institute, among others.

On this sad occasion, the Prelate sent a letter of condolence to Charles' sister, Prelacy benefactress Mrs. Rose Kasimian.

### **Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿՐ ՊԱՏՈՒԷ ԻՐ ԲԱԶՄԱՍԵԱՅ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ**

Նախաձեռնութեամբ Օրէնճ Բառնթիի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ հովիւին ու հոգաբարձութեան, Կիրակի, 29 Յուլիսի երեկոյեան յատուկ ճաշկերոյթ մը կազմակերպուած է, ի պատիւ եկեղեցւոյ ծառայող ազգայիններուն:

Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը վայելող սոյն ձեռնարկը տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ «Ղուկասեան» սրահին մէջ: Ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ:

### **FORTY MARTYRS CHURCH TO HONOR BOARD MEMBERS**

The Pastor and Board of Trustees of Forty Martyrs Church in Orange County have organized a banquet on the evening of Sunday, July 29. The banquet is taking place under the auspices of the Prelate at "Gugasian" Hall, and is being held to honor Church Board members. Representatives of the Executive Council will be in attendance.

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԶԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Բալիֆորնիոյ Զայ Երիտասարդաց Միութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը Ուրբաթ, 27 Յուլիսին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Առաջնորդ Սրբազանին կողմէ: Այս միութեան անդամներուն մեծամասնութիւնը նախկին իրաքահայեր են:

Ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեցին Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքին համար ու ծանօթացան անոր յարկին տակ տարուող աշխատանքներուն: Անոնք Առաջնորդ Սրբազանը

հրաւիրեցին Միութեան 15-ամեակի տոնակատարութեան, որ տեղի պիտի ունենայ 24 Օգոստոսին:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ միութեան նախանձախնդիր մօտեցումին մասին եւ յաջողութիւն մաղթեց անոր աշխատանքներուն:

## **PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF THE ARMENIAN YOUTH ASSOCIATION OF CALIFORNIA**

On the morning of Friday, July 27, a delegation representing the Armenian Youth Association of California visited the Prelacy. Most of the members of the association are Armenians who have emigrated from Iraq.

During their meeting with the Prelate the representatives congratulated the Prelate on the completion of the new headquarters and became acquainted with the various activities that took place at the Prelacy. They also invited the Prelate to the association's 15<sup>th</sup> anniversary banquet scheduled for August 24.

The Prelate commended the association for its undertakings and wished them success.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԻՆԻ ԺՈՂՈՎԻՆ**

Չորեքշաբթի, Յուլիս 25-ի երեկոյեան գումարուեցաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Խնամակալ Մարմինի հերթական ժողովը, հաստատութեան գրասենեակին մէջ, Կլենտէյլ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Թինյ. Աթմաճեան ներկայ եղաւ ժողովին:

Յայտնենք, որ Առաջնորդ Սրբազանը համանախագահն է այս ժողովին: Ժողովին ներկայ էր նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրանի մօտ Ազգ. Առաջնորդարանի ներկայացուցիչ՝ տիար Բեգլար Փիլաւճեան:

## **PRELATE REPRESENTED AT THE ARMENIA FUND BOARD MEETING**

On the evening of Wednesday, July 25, the corporate Board meeting of Armenia Fund took place at the Armenia Fund office in Glendale. Rev. Vazken Atmajian, Pastor of St. Mary's Church, attended on behalf of the Prelate who is co-president of the organization.

Prelacy representative Mr. Peklar Pilavjian also participated in the meeting.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԵՐ. ՅՈՎԱՆԷՓ ՄԱԹՈՍԵԱՆԻ  
ԵՒ  
ՎԵՐ. ԼԵՒՈՆ ՊԱՐՏԱԳՃԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Երեքշաբթի, 24 Յուլիսի յետմիջօրէին, Ազգային Առաջնորդ այցելեց Յիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան Հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեան, ընկերակցութեամբ Վեր. Լեւոն Պարտագճեանի, որ հոգեւոր ծառայութեան լծուած է Հայաստանի մէջ, մօտաւորապէս 15 տարիներէ ի վեր:

Երկու  
Հովիւները  
ընդունուեցան Թեմիս  
բարեխնամ  
Առաջնորդ Սրբազան  
Հօր կողմէ:  
Հանդիպումին  
մասնակցութիւն  
բերին նաեւ Ազգ.  
Վարչութեան  
Ատենապետ Տոբթ.  
Կարօ Յակոբեան եւ  
գանձապահ Տիար  
Վահան Պզտիկեան:  
Վեր.



Պարտագճեան  
ընդհանուր գիծերու մէջ ծանօթութիւններ տուաւ Հայաստանի մէջ իր վարած  
հոգեւոր ու մշակութային գործունեութեան մասին: Հանդիպումը առիթ  
ծառայեց նաեւ ծանօթանալու Ազգային Առաջնորդարանի  
աշխատանքներուն:

**PRELATE WELCOMES REV. JOE MATOSSIAN AND  
REV. LEVON BARDAKJIAN TO THE PRELACY**

On the afternoon of Tuesday, July 24, the Prelate welcomed to the Prelacy Rev. Joe Matossian, Minister to the Armenian Evangelical Union of North America, and Rev. Levon Bardakjian, who has served in Armenia for the past fifteen years. Prelacy Executive Council Chairman Dr. Garo Hagopian and Treasurer Mr. Vahan Bezdikian also participated in the meeting.

During the course of the visit the Prelate presented an overview of our Prelacy activities to the guest Reverends. In turn, Rev. Bardakjian outlined the nature of his missionary work in Armenia.